փոխադարձ շնորհաւորական խօսքով, որով իր ուրախութիւնը յայտնեց Միաբանութեան զգացմանց մասին յաւելլով միայնգամայն թէ՝ ներկայ հանդէսը ոչ միայն ինձ՝ այլ բոլոր Միաբանութեան կը վերաբերի. ուստի եւ շնորհաւորեց փոխադարձաբար. Գոհանակութիւն և շնորհակալութիւն յայտնեց համայն աշխատաւորաց եւ մանաւորապէս անոնց, որոց ջանիւքն Տպարանը յառաջադիմութեան նոր քայլ եւս առած էր ձայնագրութեան մասին և ապա օրհնեց ամենքը հայրական օրհնութեամբ։

Երեկոյեան չափաւոր հացկերոյթ մի պատրաստուած էր Միաբանութեան սեղանատունը, ուր հրաւիրուած էին քաղաքացի երեւելի ազգայիններն. Ուրախութեամբ և երգերով ճաշելէն զկնի, Ամեն. Ս. Պատրիարքը յատուկ մաղթանքներ կարդաց վասն հաստատութեան Էջմիածնի Մայր-Աթոռոյ և վասն կենաց Վեհափառ Կաթողիկոսին. վասն հաստատութեան Կոստանդնուպօլսոյ Պատրիարքական Աթոռոյ և կենաց Նորին Ամեն. Գահակալին և համայն Ազգ. բարոյական հաստատութեանց յառաջադիմութեան, յարատեւ պայծառութեան եւ բոլոր Ազգին կենաց։ Այն Մաղթանքներն կնքեցան համայն հրաւիրելոց և սեղանակցաց միաձայն Կեցցէներով և Էլջէններով։

Արժան կը համարիմք ձայնագրեալ Ուղերձն ընթերցող Ազգայնոց հաղորդել։

# ՈՒՂԵՐՁ

## ԱՌ Տ. ԵՍԱՅԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ
## ՅԱԽՈՒՐ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԵԱՆ
## ԱՆՈՒԱՆ ԻՒՐՈՅ

Որ 'նդ այգս այգուն զմութն ընդ լուսոյն քողածիգ՝
Ի կոյս ու 'ի կոյս ծագաց երկրի թափառէք.
Ո՜ փառաղունք անձնագեղից Եդեմին,
Տուք զակն 'ի վեր յԱստան հրաշից Անմահին.
Հնչէ Սաղիմ յերգոց մըրմունջ սիրատարփ,
Հըրճուին բարձունք յարփւոյն ցոլցն 'ի տարափ։

Մանկունք սիրասուն
Գգուեալքդ 'ի գարուն
Ոյց ոգէքդ 'ի խինդ
Կայտռեն թինդ 'ի թինդ
Օ՜ն առք Վեհին 'ի նուէր
Զմաղթանս սրտից աղօթկեր,
ԵՍԱՅԻԱՍ մեր Հայր
Կեցցէ յամս յամայր։

Ողջո՜յն ընդ քեզ ծընունդ Թոհկից խօլական,
Ողջո՜յն զուարթունդ լուսոյ ծագեալ 'ի սերկեան,
Ո՛վ անձկայրեաց մնայաք կզկաթ կաթողի.
Ո՛հ, զի՞ր արկեր դու խանդ 'ի միտս եւ հոգի.
Իբր ըզՄասիս հանուրց լերանց գերակայ՝
Աստեղանմա՛ն բերցես ճակատ առ յապայ:
Մանկո՛ւնք սիրասուն, և այլն:

Ո՛հ, զի՞ չքնաղ զի՛ Հայրենեաց քաղցր է յուշ.
Զի՛ աղեկեզ հառաչք ողբոց Մօրն անուշ....
Իցէ՞ ինչ խոչ, իցէ՞ կրճիմն եւ արգել
Հրածին կայծից զահեղ ճայթմունս խափանել....
Ի՛բր Հայրենիք փառաց Կրօնին առ երի
Սրբէ զպաղպաջ արտօսր աչաց իւր ծաւի:
Մանկո՛ւնք սիրասուն, և այլն:

Աստուածային ոգի հրաշից ըստեղծող
Ի՜բր յանվրկանդ վառէ աշխոյժ զանարգ հող,
Ըսքանչելիս կորզել արտաքս յանէից,
Ջուր յապաւած բղխել վիմէն յորդալից.
Զի այս վըճիռք յաւիտենից 'ի սկզբանց,
Գերճ վատակօք դից գոլ յՈլիմպ զուգապանծ:
Մանկո՛ւնք սիրասուն, և այլն:

Առ քե՛զ ո՛վ Հայր, վառեա՛լդ յաւիտն խանդալից,
Առ քե՛զ սլանան իղձք, ձօնք, մաղթա՛նք մեր սրտից.
Թո՛ղ հրաշլինուց որոտընդոստ 'ի Թնդիւն՝
Արքայք ըղձուէր առցեն սրտից գողդոջուն.
Խարխա՛ւլ են ո՜հ խարխուլ գահոյք ոսկեղէն՝
Ոյց պատուանդանք յոսկերս աղանց յեցեալ են:
Մանկո՛ւնք սիրասուն, և այլն:

Տե՛ս այս Հա՛յր, տե՛ս ըզՄասիս աղաւաղ,
Զի՛ հրաշագեղ յառնէ նորոգ վերկենցաղ,
Իբրեւ զարեգն ելեալ յամպոց բարդ 'ի բարդ՝
Լուղի հեզիկ յեթերին ծով լուսազարդ.
Եւ ըղձալիդ փայլէ յինքեան ցոլացիկ՝
Զանեղը անբաւ անմահութեան ըղկինիք:
Մանկո՛ւնք սիրասուն, և այլն:

Ի դիմաց
Ժող. Աշակերտաց
Աւետիս Կարապետեան:

digitised by A.R.A.R.@

Միջակ · Նէւար Ձէն Բաշէուոմ։

ՈՐ 'նդ այգս այ գուն զմութենընդ լու սոյն

քո · զա ձիգ՝

Ի կայս ու'ի կոյս ծա գաց երկ րի

Թա փա ռէք,

Ո · փա ռա զունք ա նձ նա գե ղեց

Ե գէ մին,

Տու ․ք զա կն 'ի վէր յՈ սան

հրա շէց Ա. նմա հէն,




ՅՈՐԴՈՐԱԿ




digitised by A.R.A.R.@




Եղանակեաց
Գէորգ Պ. Գրիգորեան.

# ԽՈՐՀՈՒՐԴ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ

(Շարունակութիւն և վերջ, տես թիւ 6:)

Մարդոյ Ճէջ: — Այս կարգին մէջ փրկագործութիւն մը ակնկալելու համար, պէտք է որ սորա արժէքն և կարողութիւնն առնուազն համեմատական ըլլայ փրկուելիք առարկային հետ: Արդ՝ ի՞նչպէս կարելի է որ անկատար և մահկանացու մարդն կարենայ իւր համար կատարեալ և անմահ փախճան մը հայթայթել: Ի՞նչպէս պիտի կարենայ՝ սկզբնական մեղաց հաղորդ մարդըն, տոկալ և համբերել թէ իւր և թէ հանուր մարդկային ազգի մեղաց ծանրութեան: Ո՞չ ապաքէն այսպիսի անձնազոհութիւն մը գերբնական սէր եւ զօրութիւն կը պահանջէ: Գոգցես երկինք թոյլատրած է որ 4000 տարիներ անցնին մարդոյ անկմանէն մինչ 'ի վերականգնումն, որպէս զի միջոց տայ

digitised by A.R.A.R.@